



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՂ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱԵՄ

ԿԻՐԱԿԻ, 4 Օգոստոս 2019

122

DIMANCHE, 4 Août 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Բ. ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ
2ÈME DIMANCHE APRÈS LA TRANSFIGURATION

Աստուածաշունչի Ընթերցումներ
Ա. ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.25-30)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(18.10-14)

Les lectures de la Bible d'aujourd'hui
1 CORINTHIENS 1.25-30
MATTHIEU 18.10-14

Պատարագիչ եւ քարոզիչ` / Celebrant
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30

Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Հոգեհանգիստ Ժամը 12:00-ին

Requiem à 12:00

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ

1.25-30

25 որովհետեւ Աստուծոյ յիմարութիւնը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարութիւնը մարդոցմէ աւելի ուժեղ է: 26 Արդարեւ դուք կը տեսնեք ձեր կոչումը, եղբայրներ, թէ ինչպէս ո՛չ թէ շատ իմաստուններ՝ մարմնի համեմատ, շատ զօրաւորներ, շատ ազնուականներ կանչուեցան, 27 հապա Աստուած ընտրեց աշխարհի յիմարները՝ որպէսզի ամօթահար ընէ իմաստունները: Աստուած ընտրեց աշխարհի տկարները՝ որպէսզի ամօթահար ընէ հզօրները. 28 Աստուած ընտրեց աշխարհի ստորինները, անարգուածներն ու բան մը չեղողները, որպէսզի ոչնչացնէ բան մը եղողները. 29 որպէսզի ո՛չ մէկ մարմին պարծենայ Աստուծոյ առջեւ: 30 Բայց դուք քրիստոս Յիսուսով անկէ՛ք, որ Աստուծմէ մեզի համար իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ ազատագրութիւն եղաւ.

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

18.10-14

10 «Ուշադիր եղէք որ չարիամարիէք այս պգտիկներէն մէկը. քանի որ կ'ըսեմ ձեզի թէ երկինքի մէջ անոնց հրեշ-տակները ամէն ատեն կը տեսնեն երեսը իմ Յօրս՝ որ երկինքն է: 11 Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու: 12 Ինչ է ձեր կարծիքը. եթէ մարդ մը ունենայ հարիւր ոչխար եւ անոնցմէ մէկը մոլորի, իննսունինը ոչխարները լեռները չի՞ թողուր ու՞ երթար՝ փնտռելու մոլորածը: 13 Եթէ պատահի որ գտնէ զայն, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ աւելի՛ կ'ուրախանայ անոր համար, քան իննսունիննին՝

որոնք մոլորած չէին: 14Այսպէս՝ ձեր երկնաւոր Յայրը չի հաճիր որ այս պատիկներէն մէկը կորսուի»:

1 Corinthiens

1.25-30

25Parce que la folie de Dieu est plus sage que les hommes, et la faiblesse de Dieu est plus forte que les hommes. 26Car, mes frères, vous voyez votre vocation, que vous n'êtes pas beaucoup de sages selon la chair, ni beaucoup de puissants, ni beaucoup de nobles. 27Mais Dieu a choisi les choses folles de ce monde, pour rendre confuses les sages; et Dieu a choisi les choses faibles de ce monde, pour rendre confuses les fortes; 28Et Dieu a choisi les choses viles de ce monde, et les méprisées, même celles qui ne sont point, pour abolir celles qui sont. 29Afin que nulle chair ne se glorifie devant lui. 30Or c'est par lui que vous êtes en Jésus-Christ, qui vous a été fait de la part de Dieu sagesse, justice, sanctification, et rédemption; 31Afin que comme il est écrit, celui qui se glorifie, se glorifie au Seigneur.

Matthieu

18.10-14

10Prenez garde de ne mépriser aucun de ces petits, car je vous dis, que dans les cieux leurs Anges regardent toujours la face de mon Père qui est aux cieux. 11Car le Fils de l'homme est venu pour sauver ce qui était perdu. 12Que vous en semble? Si un homme a cent brebis, et qu'il y en ait une qui se soit égarée, ne laisse-t-il pas les quatre-vingt-dix-neuf, pour s'en aller dans les montagnes chercher celle qui s'est égarée? 13Et s'il arrive qu'il la trouve, en vérité je vous dis, qu'il en a plus de joie, que des quatre-vingt-dix-neuf qui ne se sont point égarées. 14Ainsi la volonté de votre Père qui est aux cieux n'est pas qu'un seul de ces petits périsse.



Հոգևոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Փոքրիկներէն մէկը չարհամարիէք»

(Մատթէոս 18 10-14)

Միբելի քրիստոսակիր քոյրեր եւ եղբայրներ, եկեղեցւոյ մէջ դօդանջող աւետարանի էջերէն, խիստ պատուիրանի մը առջեւ է որ այսօր կը գտնուինք:

Որո՞նք են այն փոքրիկները որոնց մասին մեր Տէրը կ'ակնարկէ ու կը պատուիրէ չա՛րհամարիել զիրենք: Տարիքո՞վ փոքրիկները նկատի ունի արդէօք. շատ անգամներ կը հանդիպինք նոյնանման մատնանշումներու, որոնք կը կարծենք թէ տարիքով փոքրիկներու մասին խօսած ըլլայ մեր Տէրը. սակայն խորքին մէջ այս չէ բոլոր ճշմարտութիւնը:

Յարգելիներ, մեզմէ որո՞նք կ'արհամարիեն ու կ'անարգեն տարիքով փոքրերը . կարծեմ ոչ մէկը: Բայց ո՛չ, ներողութիւն. կան փոքրիկներ որոնց կ'արհամարիենք, եթէ անոնք աղքատ ընտանիքի զաւակներ ըլլան, եւ կամ անոնց հայրն ու մայրը որոշ անպատկառելի նկարագրի մէջ կը գտնուին եւ կամ որոնք հոգեկան հիւանդութենէ կը տառապին, մոռնալով որ այսպիսի երեխաներ ոչ մէկ յանցանք ունին իրենց ընտանիքի վարքին մէջ, ու մոռնալով նաեւ թէ այսպիսի երեխաներ կրնան օր մը բժիշկներ, փաստաբաններ, դատաւորներ, հոգեւորականներ եւ նոյնիսկ կաթողիկոս դառնալ. աւելին ըսեմ: Կարդացէք Վարք Սրբոցը, ու պիտի տեսնէք թէ մեր սուրբերուն մեծ մասը եղած են աղքատ ընտանիքի զաւակներ, եւ կամ որբեր:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս միայն այսպիսիներուն չէ որ կ'ակնարկէ, այլ հոգիով փոքրերուն մասին է խօսքը, ու լեռան քարոզին մէջ անոնց՝ հոգիով աղքատներուն երանի կու տայ: Ինչքա՛ն հարուստներ կան որոնք, հակառակ իրենց համբաւին ու ստացուածքներուն, հոգիով աղքատ կը մնան ու խոնարհ, քանի լաւ գիտեն թէ իրենց ունեցուածքը կամ հարստութիւնը ոչ մէկ ձեռով իրենց չի պատկանիր: Քաջատեղեակ են թէ Աստուած է աղբիւրը բոլոր բարութեան, ու աղբիւրն է իրենց այդ իմաստութիւն պարգեւողը, որուն միջոցով իրենք կրցան այդ բոլորը ձեռք բերել: Ճշմարիտ փոքրիկները անոնք են մանաւանդ, որոնք Աստուծոյ փառքին համար ինքզինքին կը փոքրացնեն՝ կը խոնարհեցնեն որպէսզի Աստուած անոնց ընդմէջէն ու փոխարէն մեծնայ, իրենց անձը կը նսեմացնեն, որպէսզի Աստուած իրենց փոխարէն բարձրանայ ու փառաւորուի:

Խոնարհս, այս պատուիրանը մէկ այլ ձեւով կը հասկնամ՝
ՉՉՊԱՐՏԱՆԱԼ:

Հպարտութիւնը մեծագոյն մեղքն է, որուն մէջ իյնալով այլեւս ոչ մէկը չենք կրնար տեսնել, ու բոլորին կ'արհամարհենք, մենք մեզի դասելով լաւագոյններուն եւ իմաստագոյններուն շարքերուն մէջ:

Հպարտութեան հիւանդութիւնը մեծագոյն ախտն է մեր ժողովուրդին բոլոր դասակարգերուն մէջ, ու նոյնիսկ հոգեւորականներուն դասին մէջ: Շատ յաճախ կը հանդիպինք սարկաւազներու եւ վերջին ընծայարանի աշակերտներու, որոնց մէջ կը գտնենք խոնարհութեան մարմնացումը. սակայն հազիւ թէ անոնք ծունկի գան խորանին առջեւ, ու երդուին ժողովուրդին սպասաւոր ըլլալու, մեծ մասամբ խոնարհութենէն կը հեռանան:

Թող ներեն ինձի իմ հոգեւոր եղբայրներս ու հայրերս այս արտայայտութիւններուս համար, քանի չեմ կրնար ժողովուրդիս հպարտութիւնը քննադատել, ու անտեսել մեր հոգեւորական դասին հպարտութիւնը, որ աւելի ծանր պիտի կշռէ Անոր առջեւ՝ որ մեզի ընտրեց իրեն նմանելու բառին իսկական իմաստով: Տէր, վերջնականօրէն փշրէ՛ մեր հպարտութիւնը ու խոնարհ հոգի պարգեւէ մեզի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քնյ. Մարգարեան

ՇԱԲԹՈՒՍՅ ԽՈՐՀՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Համացանցեն, պատկերասփիռն մարդուն պետք է սորվեցնեն ո՛չ թե ինչպես սիրուհի գտնել, այլ թե՛ ինչպես ընտանիք կազմել եւ պահպանել, ո՛չ թե ինչպես ապրուստ վաստկիլ խաբէութեան ճանապարհով, այլ թե՛ ինչպես ընել այդ ազնիւ ճանապարհով:

Կիրիլ պատրիարք

Որքան մարդը անգործ կը նստի, այնքան կը տկարանայ, որքան կ'աշխատի, այնքան ուժեղ կը դառնայ: Բացի անկէ, աշխատանքով կը վանէ տխրութիւնը, նաեւ իրեն հոգեւոր կերպով կ'օգնէ:

Ս. Պաիոսիոս Աթոսացի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի հաւատացեալներուն ուշադրութեան կը յանձնենք թէ յետայսու Յուդարկաւորութիւններու ընթացքին հանգուցեալի հարազատներէն կը խնդրուի նկատի ունենալ, թէ արարողութեան ընթացքին որեւէ սրտի խօսք կամ դամբանական կարդացուելէն առաջ, հարկ է նախօրօք կապ հաստատել Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066, այլապէս ենթական իրաւունք չունենար որեւէ խօսք առնելու եկեղեցոյ մէջ, առանց Հոգեւոր Հովիւի գիտակցութեան եւ արտօնութեան:

Շնորհակալութիւն ձեր ողջախոհութեան համար:

Եկեղեցոյ գրասենեակ

ATTENTION

we would like to ask to our beloved faithful to take note that in terms of funeral services the family members before making any heartfelt speech or eulogy, it is necessary to contact the Church Office at (514) 279-3066 or otherwise will not be possible to make any speech in the church without the consciousness and permission of the Parish Priest.

Thank you for your understanding.

Church Office:

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ**

Օգոստոս - Août

5, Երկուշաբթի – Տօն Սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսի եւ քառասուն եւ հինգ վկայիցն եւ սրբոց կուսանացն Յուստիանեայ, Եւփիմեայ եւ Քրիստինեայ:

Lundi 5 – Fête du Saint évêque Cyprien, des saints 45 martyrs et des vierges saintes, Justine, Euphémie et Christine.

6, Երեքշաբթի – Տօն Սրբոցն Աթանազիւնեայ եպիսկոպոսին եւ տասն աշակերտացն եւ հինգ վկայիցն:

Mardi 6 – Fête des saints évêque Athanakiné, de ses dix disciples et des cinq martyrs.

7, Չորեքշաբթի – Պահք

Mercredi 7– Jeûne.

8, Հինգշաբթի – Տօն Սրբոց նախահարցն՝ Ադամայ, Աբելի, Մեթայ, Ենովսայ, Ենովքայ, Լոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Յովսէփայ, Սովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեղէօնի եւ այլոց սրբոց Նախահարցն:

Jeudi 8– Fête des Premiers Patriarches Adam, Abel, Seth, Enos, Enovk, Noë, Melkisédek, Abraham, Isaac, Jacques, Joseph, Moïse, Aharon, Eliazar, Josué, Samuel, Samson, Ephéta, Barag, Gédéon et autres saints patriarches.

9, Ուրբաթ – Պահք

Vendredi 9 – Jeûne.

10, Շաբաթ – Սրբոց որդւոց եւ Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորիչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի:

Samedi 10 – Fête de Saints enfants et petits-enfants de Saint Grégoire l’Illuminateur Arisdaguès, Vertanès, Housgan Krikoris et Daniel.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Յիշէ՛, Տէր, քեզի ծառայողները.

- Մեր ծնողները, ուսուցիչները, եղբայրներն ու քոյրերը, ընկերները, մեզ կերակրողները, ուխտաւորները, ճամբորդները, մեզ հանգստացնողները, վաստակաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, նեղեալները, իշխանութեան գլուխ գտնուողները, մեզի չարիք ընողները, բարերարները, թշնամիները, մեզ ստողները. Եւ անոնք՝ որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ: Բարերար եւ բազումողորմ Աստուած, քու անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշէ՛ բոլոր, քեզի հաւատացողները, եւ ողորմէ՛ բոլորին: Օգնէ՛ եւ փրկէ՛ ամէն տեսակի վտանգներէն ու փորձութիւններէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

PRIÈRE POUR TOUS

Souviens-toi de nous, tes ministres, de nos parents, enseignants, frères, amis, de ceux qui nous nourrissent, ceux qui ont faits des vœux, ceux qui voyagent, ceux qui nous donnent la paix, ceux qui travaillent, les confesseurs, les pénitents, les reclus, le malades, les opprimés, le princes, les malfaiteurs, les bienfaiteurs, les ennemis, ceux qui nous haïssent et tous ceux qui nous sont unis dans la foi afin de prier pour eux.

O Dieu infini et miséricordieux, dans ta grande sagesse et dans ton amour infini pour l'humanité, sois prompt envers tous ceux qui croient en toi et aie pitié de nous tous. Aide-nous et libère-nous des dangers et des épreuves. Rends-nous dignes de te remercier, de te glorifier et de remercier et de glorifier le Fils et le Saint-Esprit, maintenant et toujours dans l'éternité de l'éternité.

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 4 Օգոստոս 2019



Տիկ. Շուշան Էկոյեանի,

Տ. եւ Տիկ. Աթոմ Էկոյեանի եւ Արսինէ Խանճեանի եւ զաւկին՝
Արշիլի,

Տ. եւ Տիկ. Տէյվիտ Ռօքըպի եւ Իվ Էկոյեանի եւ զաւկին՝
Վիվայի,

Տ. եւ Տիկ. Ստեփան եւ Էլիան Էկոյեանի,
Տիկ. Արաքսի Անկրապեան-Էկոյեանի,

Տ. եւ Տիկ. Արա Էկոյեանի եւ Մարի Գինոյեանի եւ
ընտանիքին,

Տօքթ. եւ Տիկ. Գրիգոր եւ Ալին Բէտերեանի եւ ընտանիքին,
Պրն. Ժիրայր Տէօվլէթեանի,

Մայտա եւ Մատլէն Թաթիկեանի եւ ընտանիքին,

Տ. եւ Տիկ. Ստեփան եւ Վիվիան Իպիշեանի եւ ընտանիքին,

Տ. եւ Տիկ. Ճերի եւ Թալին Տէօվլէթեանի եւ ընտանիքին,

Եւ համայն Էկոյեան, Թաթիկեան, Անկրակեան, Խանճեան,
Ռօքըպի, Բէտերեան, Տէօվլէթեան եւ Իպիշեան
ընտանիքներու,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր, մեծ հօր եւ
հարազատին՝

ԺՕԶԷՖ ԷԿՈՅԵԱՆԻ (JOSEPH EGOYAN)

Մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիկ. Սիլվա Գարառույանեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իր սիրեցեալ մօրեղբօր՝

ՍԵՂՐԱԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

(SETRAK GARABEDIAN)

(Մահացած Հալէպ)

Մահուան 40-ին առիթով



Տիկ. Հայկունի Տիրատուրեանի,
Տիկ. Սիլվա Գարճեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր՝

ՄԱՐԳԱՐ ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆԻ

(MARKAR DIRADOURIAN)

Մահուան 40-ին առիթով



**ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ
Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցույ
Հոգևոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը

**ՇԱՆԹ ԴԱԻԻԹԵԱՆ
ԵՒ**

ԹԱՍԱՐԱ ՓԱԹԱՔՅԱԼՎԻ

Պսակադրութեան ուրախ առիթով
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն
պսակադրեալ զոյգի
Ծնողներուն եւ հարազատներուն,
մաղթելով որ Աստուածային Օրհնութեան
արժանանան իրենց կեանքի ամբողջ տևողութեան:

**CONGRATUALTIONS
ON THE WEDDING CEREMONY**

The Pastor & Parish Council
Of the St-Gregory the Illuminator
Armenian Cathedral

On the Wedding Ceremony
Of

SHANT TAVTIAN

&

TAMARA PATAKFALVI

Extend their heartfelt congratulations
to their parents and family,
wishing them to receive
God blessing throughout their life.



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ**

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ



**ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

առաւօտեան ժամը 10:30-ին
Գառարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶԸՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
Հոգևոր Հովի**

**Յաւարտ Ա. Գառարագի
«Խորովածի Մպաապկութիւն»
նախաձեռնութեամբ՝
Միակն խորհուրդի
Մասնակցութեամբ՝**

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

**«Անուշեղէնի «հաճառ» կազմակերպութեամբ՝
Տիկնանց Յանձնախումբին
Եկեղեցայ պարտեզին մէջ:**

Մուտքի Կուր՝ \$20

ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

**DIVINE LITURGY
AND BLESSING OF GRAPES**

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

**At the end of the Blessing of the Grape,
the service of B.B.Q. organized by the Parish Council
with participation of Bolsahay Cultural Center**

**Pastry sales,
by assistant ladies from the church.**



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / Email saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



KARAOKE ԸՆԴՈՒՔԷ

Կազմակերպութեամբ՝

«ԿՈՄԻՏԱՍ»

Դպրաց Դաս / Երգչախումբի

Ուրբաթ, 23 Օգոստոս 2019

Երեկոյեան ժամը 6:00-ին

«Մարի Մանուկեան» սրահ

Friday, August 23, 2019 at 6:00 pm

“Marie Manoogian” Hall

- Երգեցողութիւն/Singing
- Կերուխում /
Burger/Potato/Salad/Soft Drinks

Քրակիրուած են բոլոր
Երիտասարդները
Don't Miss

Տեղերու ապահովման հեռաձայնել Եկեղեցւոյ
Գրասենեակ - For reservation please call to the Church
office at: (514)279-3066

\$20 Entry

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008 / stgregorychurch@gmail.com





ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թե Շաբաթ 27 Յուլիս 2019-ի երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սր. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՌԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

PILGRIMAGE TO PÈLERINAGE EN

ARMENIA



ARMÉNIE

02.10.2019

15.10.2019




Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցու Գանատահայոց Թեմը
Օրհնութեամբ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերջ Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի՝
կր կազմակերպէ 14 օրեայ Ռէտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամանութիւններու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:




The Armenian Diocese of Canada,
with blessings of
His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.



Le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le
Diocèse.



USD \$1,400 PER PERSON IN DOUBLE ROOM
SINGLE SUPPLEMENT \$400



Price includes: Hotel accommodation with Breakfast,
14 Lunches, 1 Dinner, Entrance fees to the sites,
Transportation, Professional Guide
Not included: Visa fee, Airfare, Insurance.



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada»
on Facebook to receive and
share news about the Diocese.



WATCH

a documentary about the Pilgrimage. Find
the «Armenian Diocese of
Canada» Channel on YouTube.

